

իրանց ազգութիւնը. Ուսանողները մէջ հազիւ ութ հոգի հայ են գրեւ իրանց, որի վրայ վրդովուելով նա պատուիրեց Թեոդորովիչին «իւ անունով յանդիմանելու այն ուսանողներին, որոնք իրանց հայ աւանը մոռացել են նշանակելու ցանկի մէջ. եթէ ուր մինը, լեհը, գերմանացին այստեղ չեն մոռանում իրենց ազգը, մենք ի՞նչու պիտի մոռանանք»։ Մինչ այդ, պրոֆեսսոր Անտոնիչը մանկական պարզութեամբ խնդրեց լսել իր երգածը և հաստատեցնել, արդեօք ճիշտ է եղանակը... և յիսուսամեայ գիտնականը սկսեց երգել «Մեր հայրենիք թշուառ անտէր... մի այնպիսի տենչանքով, որ կարելի էր լաց լինել, եթէ մարդ չամաչէր, Այդ երգը նա սովորած է եղել Վենետիկի հայրերից, առանց հայերէն գիտենալու։

Լսելով որ տեղական հայ ուսանողները ուղում են հայերէնի ուսուցիչ հրաւիրել, նա սաստիկ ուրախացաւ անւաճեցնելով, որ աշակերտներից մինն էլ ինքն ու իր որդին պիտի լինին։ Երբ ես կրկին խնդրեցի խոստանալ Հայաստան գալու, նա ասաց, որ առաջիկայ երեք տարուայ ընթացքում նա այդ չի կարող անել, որովհետեւ գիտնական նպատակով նա պաշտօնապէս պարտական է ուղևորուել Իտալիա և Պորտուգալիա, իսկ այնուհետեւ «երբ ես հայերէն սովորած կլինեմ, այն ժամանակ կուգամ Հայաստան իմ աչքով տեսնելու և հասկանալու, որովհետեւ ես ուսումնասիրած չեմ համարում այն բանը, որ թարգմանների միջոցով է կատարւում»։ Նա հայերէն սովորելու դասագիրք խնդրեց ինձանից, որ անկարող էի տալ, քանի որ այդպիսին աշխարհաբարի համար գոյութիւն չունի։ Խօստանալով նիւթեր ուղարկել հայ արուեստի և հայ երաժշտութեան մասին, յայտնել մանաւանդ՝ արդեօք հայի գործած կապերու, գորգը և կամ որ և է արուեստի գործերից, ես մնաս բարեւ ասացի պրոֆեսսորին, որ մի անմոռանալի դուրեկան և վաւորութիւն թողեց վրաս։


Նա իրրեւ յիշատակ ինձ տուաւ մի փոքրիկ բրօշիւը, և Հաստանի հայերի մասին, որ իր գրածն է, և քաղուած է «Լուստրո—Անգարեան պատկերով ու խօսքով»։ յայտնի գործից, որ պետական հրատարակութիւն է։ Այդ բրօշիւրի թարգմանութիւնն է, որ տալիս ենք ստորեւ...

Նոյն երեկոյեան ժամը 10-ին, 12-ի չափ երիտասարդ հայեր երկաթուղու կայարանն եկան ուրախ երգերով և յոյսերով ծանապաճ ձգելու Հայաստանցի բարեկամին, ուղարկելով իրանց լաւագոյն իղձերն ու ցանկութիւններն իրանց հեռաւոր եղբայրներին...

Երկաթուղին սլանում է, և առանձնացած թիւակում շարունակ մտածում եմ երազ էր այս ամէնը թէ իրականութիւն... և ես յաւիտեան

չեմ մոռանայ այդ բարի, ազնիւ ու հիւրասէր երիտասարդներին, որոնք երկու օրուայ ընթացքում այնքան դուրեկան և անջնջելի տպաւորութիւն թողին վրաս...

Դր. Վանցեան.



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԱՆԳՂԻԱԿԱՆ ՄԻՋԻՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ

ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ.

Վարուց ի վեր առած է զառել անգղիական ազգի գործնական խելքն ու ձեռներէցութիւնը. նոքա աշխարհի բոլոր մասերում իրենց շահերն ունին լինի քաղաքական, լինի սոսկալական, ամբողջ աշխարհը ձգտում են իրենց ազդեցութեան ենթարկել քաղաքականապէս կամ անտեսապէս, և այդ միայն լոկ ձգտումն է, այլ որոշ չափով իրողութիւն։ Ամէն մի աշխարհագրութեան տարերքը սովորող աշակերտ գիտէ, որ ամենաբնորոշակ կալուածները, իրենց բաղմամբիւ բնակիչներով Բրիտ. մի փոքրիկ խումբ կղզիների բնակիչներին են պատկանում։ Եւ այդ բաղմամբիւ ժողովուրդները ոչ միայն գէնքի ոյժով նուաճուած ու կապուած են, ոչ միայն ճնշման երկիւղով հպատակ են, այլ և ենթարկուած են նոցա քաղաքակրթիչ ազդեցութեան, իրենց անհատական ազատութեամբ, ներքին կառավարութեամբ, կրթութեամբ և հորստութեամբ անհամեմատ առաջ են շատ ու շատ անկախ պետութիւն ունեցող ժողովուրդներից։

Զարմանալի չէ ուրեմն, որ շատ ու շատ զիտնականներ, նոյն իսկ պետական անձինք, ուսումնասիրում են անգլիական կեանքը իւր բոլոր երեւոյթներով, մանաւանդ յատուկ ուշք են դարձնում նոցա սկզբնական և միջին կրթութեան վրայ։ Եւ շատերը եկել են այն կարգացութեան, որ այս զարմանալի յառաջադիմութեան, եռանդի, ձեռներէցութեան զկեսոր ոյժ տուողը նոցա բնատնկան և զպրօցական կրթութիւնն է։ Հետաքրքրուում

են այս մասին յատկապէս Ֆրանսիացիք ա-
մերիկացիք, և արդէն ամբողջ գրականութիւն
են ստեղծել: Աւելի ընդարձակ տեղեկութիւն-
ներ ցանկացողները թող ձեռք բերեն Մ. Լի-
կիերկի կամ Է. Դեմուլէնի գրքերը: Իսկ մենք
կրտականանանք յիշատակել այստեղ միայն
միջնակարգ դպրոցների ուսման և դաստիա-
րակութեան բնորոշ գծերը:

Ա.

Անգղիական կրթութեան գործով հետա-
քըքրբութեանը ցոյց են տուել, որ Բրիտա-
նական ժողովուրդը միշտ այդպէս չէ եղել,
ինչպէս այսօր՝ է: Հինգ հարիւր տարի առաջ
փակուած, յետ ընկած, քնաթափութեան
ենթարկուած, այսօր եռուն կեանքով, անյաղ
գործունէութեամբ, ամէն տեղ և ամէն գոր-
ծում: այնպէս որ ստուերն անգամ չէք զբա-
նիլ այսօր անցեալի թուութեան, անգործ ու
անընդունակ անդլիացու: Յոյն իսկ՝ ականա-
տենների տակով՝ յիսուն հարիւր տարի ա-
ռաջ անգղիացիք կոշտ դանդաղաշարժ, շա-
տակեր և արբեցող մի ժողովուրդ էին: Սրա
ծովային դրութիւնը հետագայ սերունդի
գործ է: այս փաստ է, որ նոր երկրներ գտել
են ուրիշ ազգեր՝ Իսպանացիք, Հոլանդացիք
և չին:

Պէտք էր այդ ժողովուրդը բոլոր ուժով
աշխատէր, կրթուէր, բնաւորութեամբ փո-
խուէր, քնած ընդունակութիւնները զարթե-
ցընէր, մի խօսքով պիտի վերաստեղծուէր, և
նա այդ արտ ի վարմանս բոլոր ազգերի: Ա-
ռաջուայ գիտութեան, հասկանալու արամա-
ղիր անգղիացին փախչում է գիտութիւնից. նա
այսօր գործունէութեան և շարժողութեան մի
զարմանալի օրինակ է:

Անգղիացին այսօր ինչ վիճակ էլ ունենայ
կրթութիւնը ձեռքից չի թողնիլ, նա վարժուում
է ինքնօգնութեան և կարգապահութեան: Ար-
դէն մանկութիւնից, դպրոցական նստարանից
երեւան են գալիս բնաւորութեան և տաղան-
դի տէր, ապագայում՝ ժողովրդի գլուխ և
առաջնորդ կանգնող անձինք՝ շնորհիւ այն
ուղղութեան և կրթութեան եղանակին, որի
բնորոշ գծերն են ձեռննրէցութիւն, միջու-
թեան տէր, առաջնորդող դեր կատարելու կա-

տարեալ պատրաստականութիւն, առողջու-
թիւն, եռանդ՝ մի խօսքով առողջ ուղեղի, մկա-
նունքների և կամքի ներդաշնակ զարգացում:
Տեսնենք թէ, ինչպէս են հասնում նորա այդ
ներդաշնակութեան:

Անգղիական կրթութեան ամէնից բնորոշ
գիծը ուսուցման և դաստիարակութեան ան-
բաժան կապն է: Եւրոպական միւս ազգերը
խիստ տարբերում են երկու բան՝ դաստառ
և դաստիարակ. որոշ գծուած են նոցա իրա-
ւանց և պարտականութեանց շրջանները, մի-
կը միւսից անկախ է գործում: առաջինը եր-
կրորդի պատասխանատուն չէ, իւրաքանչիւրը
իւր շրջանից դուրս չի գալիս: Ուսուցիչը
դասը տուեց, ազատ է գլխարկը դնել հեռա-
նալ, նոյն իսկ դասատան մի անկարգութիւն ի
հաշիւ չտանել, կամ՝ շատ շատ յայտնել վար-
չութեան ի տնօրէնութիւն, և հանգիստ
խղճով իւր սրտոքը կատարած համարել:
Մի խօսքով դասը տալուց յետոյ չմտածել
այլևս դպրոցի դրութեան մասին, գնալ
իւր գործին, մէկ էլ միւս օրը դառնալ
դպրոց: Այս կարգը Անգղիայում գոյու-
թիւն չունի. դասատուն միեւնոյն ժամա-
նակ և դաստիարակ է. մտաւոր և բարոյական
կրթութիւն անքակ թելերով կապուած են
իրար հետ, նոյն իսկ մի հասկացողութիւն են:
Անգղիացու բառարանում չկայ ուսուցիչ և
դաստիարակ, ուսումն և դաստիարակութիւն,
այլ միայն կրթութիւն: Մարմնական, բարոյա-
կան և մտաւոր կրթութիւն միեւնոյն կարգա-
պահութեան և սկզբունքի են ենթարկուած:
Անգղիացու համար անհեթեթութիւն է երեւ-
կայել թէ, դպրոցը դոցանից մինին կամ միւ-
սին կարող է առաւելութիւն տալ, թէ կարող
է դպրոցը մտաւորապէս զարգացած, բայց
բարոյական կրթութեամբ թոյլ անձինք պատ-
րաստել, ահագին ուղեղ ու չորացած միտն-
ներ ստեղծել: Բրիտանացին չի կարող մար-
տել, որ մանուկը իւր կեանքի զգայուն և ըն-
դունակ ժամանակը անցկացնի և աշխատի ու-
սուցչի ձեռքի տակ և նորա լաւ լաւ յատկու-
թիւնները չիւրացնէ և նորա բնաւորութեան
ապկեցութեանը չենթարկուի:

Ուսուցչի տեղ բռնում են երբեմն և
տուտորներ, որոնք կամ՝ ազատ պարապմանց

տէր մարդիկ են լինում և 30—40 երեխայ կրթում են իրենց տներում կամ մի ուսումնարանի ծառայող ուր ունենում են իրենց սենեակները և պահում իրր գիշերօթիկ 40 կամ աւելի թուով աշակերտներ. տուտորները աշակերտների սեղանից ուսում և միասին նոցա հետ մնում միշտ: Տուտորը թէ ինամում է և թէ դաս տալիս: Գասարանական պարագմունքներից յետոյ նա աշակերտների առաջնորդն է խողերի և այլ պարագմանց մէջ, նոցա սիրելի և յարգելի խորհրդատուն և բարեկամը: Իսկ երթեւեկ դպրոցներում իւրաքանչիւր աշակերտ պիտի ունենայ դասատուներից մինը իւր համար պատասխանատու անձն թէ ուսուցման թէ դաստիարակութեան համար. այլապէս աշակերտը չի ընդունուիլ դպրոց:

Անգղիացու կրթութեան հիմնական սարբերութիւնը աչքի կընկնի աւելի երբ համեմատենք եւրոպական միւս աղգերի հետ: Միջնակարգ դպրոցը մայր ցամաքում ունի միայն մի գլխաւոր նպատակ. պատրաստել պետական ծառայողներ, աստիճանադրներ, որի համար մանրամասն հրահանգներով քննութեան ծրագիր կայ: Այդ ծրագիրը երջանկութեան դուռն է, որի բաղադրները սովորաբար հազարաւորներ են. իսկ ներս ընդունուողները շատ սակաւ: Ով որ դուրսը ծանրացրել է մի շարք գիտութեանց և նոցա ճիւղերի անուններով բանաձևերով և անգիր սերտած կանոնաւոր ու անխնայ տեղեկութիւններով, նա էլ աւելի յոյս ունի ներս ընդունուելու: Մարմնոյ ֆիզիքական կողմերը՝ ջղեր, մկաններ, աչքեր, ականջներ, կուրծք, ձայն վերջապէս բարոյական կամք, բարբ անտես են առնուած: Ամեն բան որոշողը ստացած թուանշանն է: Զննութեան պատրաստողը, ինչպէս և պատրաստողը ժամանակ անգամ չունի մարմնական կատարելութեանց վրայ մտածելու կամ բարոյականի համար հոգալու: Շատ տարիներ շարունակ սովորել է աշխատելով օրական 10—11 ժամ, իսկ քննութիւնը քամում է և նորա վերջին կենսական հիւժը: Իրր գերեզմանից դուրս ելած կմալքներ երևում են սղքա երկրի երեսին, մինչև որ երջանկութեան դանից իրենց

ներս ձգեն: Այնուհետև հանգչում է և եռանդ և գործունեութեան սէր և բարոյական բարձր ձգտմանց կարիք:

Անգղիական դպրոցներում պատրաստում են ոչ թէ քննութեան այլ կեանքի համար: Շոցա գլխաւոր հոգսը չէ ըստ կարելւոյն բեռնաւորել աշակերտներին գիտութիւններով, այլ անպարէզ հանել առողջ և կայտաւ երիտասարդներ, ուժեղ մարմնով ու կամքով, ճարտար ու ճարպիկ կեանքի կուրի մէջ: Անգղիացի մանկավարժները շատ են վախենում պարտասութիւնից, քաշուում են նստակեաց պարագմունքներից: Շոցա աշակերտը ամենաշատը օրական 8 ժամ է աշխատում. նոքա երեք հետամուտ չեն ընդարձակ ծրագիրների մայր ցամաքի ծրագիրը միջնակարգ դպրոցներում՝ նոցա համար չափազանց լայն է և ծանր: Բոլոր անգղ. դպրոցներում բացի աճն օրերից և կիւրակիներից՝ երկու կամ երեք անգամ շաբաթը բաց օրում խաղի են ելնում: Շոյն իսկ պատժի կողմից էլ տարբեր է նոցա հայեացքը: Ազատութիւնից կամ ճաշից, կամ ճաշի որոշ անսակի կերակրից զրկել նոցա աչքում անմիտ և վնասակար պատժ է, որ պակասեցնում է նոցա ոյժերը և վնասում առողջութեան: Գլխաւոր ջանքը պատժի փոխարէն՝ ուղղած է կրթել մանկան բնաւորութիւնը, զարգացնել նորա մէջ պատուի զգացմունքը և պատասխանատուութեան գիտակցութիւնը:

Աշակերտների վերայ հսկողութիւնը շատ քիչ է, նոցա որոշ սահմանով ազատութիւն են տալիս, նոյն իսկ փոքրները վայելում են կատարեալ ազատութիւն: Բայց ստալսսութիւնը ամենից մեծ յանցանքն է համարուում: Աշակերտի սուտը որ բռնուեց, նա պիտի թողնէ դպրոցը, որովհետև իւր ընկերներից աչք հետը չի խօսիլ: Երբ ուսուցիչը հարցնում է. «ո՞վ է արել այս բանը», — ես, կատարական յանցաւորը: Ոչ որ նրա վերայ չի ծիծաղիլ և նորա յարգը ընկերների աչքում բարձրանում է:

Անգղիական դպրոցի միւս սկզբունքն է որոշել իւրաքանչիւր աշակերտի անանձնայատկութիւնները և գիմել նորա արժիւ. զպաց

մունքներին: Ահա երկու շարժիչներ, որով թե մեծապէս օգնում են դպրոցական գործին և թե իրենց գործը թեթեւացնում: Անդղիական դպրոցը փոքր զիւրքով նոյն երկրի պետական մարմնի կազմակերպութիւնն ունի, նորա հասարակական շէնքն է:

Ուսուցչի և աշակերտի յարաբերութիւնները շատ սերտ են: բարեկամական և ոչ պաշտօնական: Ուսուցիչները շատ են հաւատում իրենց սանիկներին, մանաւանդ մեծերին: Վերջիններին՝ նոյն իսկ փոքրների կրթութեան գործում մասնակից են անում: Մեր ամենից լաւ օգնականները մեծ աշակերտներն են: աւում է Բեռլինի դպրանոցի տեսուչը՝ աւանց նոցա օգնութեան շատ գծուար կլինէր, նոյն իսկ անկարելի՝ մեր գործը կատարել: Ծրեց աշակերտները աւելի շատ կարող են օգնել դպրոցի կարգապահութեան և լաւ աղ-դեցութիւն ունենալ աշակերտների վերայ: քան վերահսկիչները: ուստի նրանց են վստահա-նում փոքր ընկերների հսկողութիւնը: Ամէն մի խումբ աշակերտ ունենում է իւր մոնի-տորը՝ դասարանում մինը կառավարում է մասնաւորաբար և զբքեր տալիս ոչ միայն աշակերտներին այլ և ուսուցչաց, երկրորդը՝ դասարանական աւարկաները, երրորդը խաղաղիքները, պարտիզպանական գործիքնե-րը ևլն ևլն: Փոքր աշակերտները պարտա-ւոր են լսել մոնիտորին, որը իրաւունք ունի նոյն իսկ պատժել, բայց եթէ ապացուցուի, որ ինքն է յանցաւորը, խիստ պատժի կեն-թաղիւի: Այսպէս վստահութիւն և հեղի-նակութիւն երկու կրթիչ ցոյժեր են: ուսու-ցիչը վստահանում է կատարելապէս աշակեր-տին, իսկ վերջինն հնազանդում է ոչ միայն ուսուցչի, այլ և իւր մեծ ընկերոջ հեղինակու-թեան: Իւրաքանչիւր աշակերտ վայելում է ընդարձակ ազատութիւն, ալն մէկի անկա-խութիւնը յարգուում է, բայց և աշաւուրջ հսկում են: որ անհատի շահը չ'ընդհարուի հասարակաց շահի հետ: Եւ այս մի խումբ մա-նուկ քաղաքացիները, որոնք յարգում են իրենց անձնաւորութիւնը և ընկերի ազատութիւնը, որոնք ունին իրենց առաջ պայտիսի կառավա-րիչներ (մոնիտորներ), հասկանում են, որ իւրաքանչիւրի անհատական ցանկութեանց մէջ

պէտք է լինի զօրեղ հաստատութիւն և միու-թիւն, որ նոցա կամքը պէտք է՝ միանայ և պահպանուի ընդհանուրի ջանքով և հնա-զանդի մի ընդհանուր օրէնքի (Լե'կլերկ):

Այժմ տեսնեք ինչպէս և ինչ ճրագրով յառաջ են վարում աշակերտ ուսուցման գործը:

(Ծար-նակէլէ)

Ս. Բ.



ՆԱԽԱԿԱՆԻԿԵԱՆ—ՀԱԹԵԱՆ ՆՈՐ ԱՐՉԱՆԱ
ԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ Ի ԿԵՍԱՐԻԱ.

Անցեալ տարի ի ս. Էջմիածին գտնուած միջոցիս, խոստացել էի ուղարկել Արարատի համար, հնութեան և կամ Հէթէթեան արձա-նագրութեան վերաբերեալ այն ալն գիւտե-րն, որք եթէ ի նորոյ գտնուին ի Կեսարիա և ի շրջակայս նորին: Ահա ահա ի կր կատարեմ իմ խոստումս, ուղարկելով Նա-խակէլէան—Հաթեան նորագիւտ արձանագրու-թիւն մի՝ ի տարագրութիւն և ի հրատարա-կութիւն Արարատ ամսագրի մէջ:

Ասկից առաջ, Վիեննայի Միթիթարեանց միարանութեան կողմի հրատարակուող, Հան-դէս Ամսօրեայ ուսումնաթերթի, 1896 յու-նիս ամսաթուսն մէջ (ԼՋ 161), երբ Ագրակի Ծախակիլիկեան — Հաթեան արձանագրու-թեան կրկին մէկ օրինակը կը ներկայացնէի, առիթ ունեցայ այնազ ըսելու թէ՝ Կեսա-րիոյ հարաւային կողմը Էրձիսա (≡Արդէոս) անուն հաշակաւոր լեռն ստորոտը գտնուած, առաւել կամ նուազ ընդարձակ տափարակ տեղերու, բլրակներու, սարերու և ձորերու վրայ եղած բազմաթիւ այգիներու կարգին մէջ Նէյէթ¹ մը կը գտնուի, որուն Կեսարիոյ ամէն ազդի ժողովրդեան բերնին մէջ, անյիշատակ ժամանակներէ, ի վեր, «Հէթէթեան» Նէյէթ¹ կրա-

1. Կեսարիոյ, առ հասարակ ամէն ազգի ժողովրդեան մէջ Նիշքը կրտուի, ինչպէս ծանօթացած ենք աղիւն, 50—100 և կամ ալ անիյն այգիներու տեղ-ւոյն, որք սահմանի մը մէջ են, և իւրաքանչիւր մեծ ու փոքր այգին այս ու այն անհատին սեփական է: